## Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլ

## Պատասխաններ-10-րդ դասարան

1. Շոգ **միջօրե** էր: Ամեն ոք՝ մարդ ու անասուն, պատսպարվել էր, ով որտեղ կարող էր:

Նոյը խաղողի այգում գինի էր վայելում: Եվս մի քանի գավաթ, ու գինին խայտաց երակներում: Զգոնությունը կորցրած՝ նա իր վրայից հանեց ողջ հանդերձանքը և առանց հագուստի՝ միանգամայն մերկ, ընկավ գետնին ու քնեց: Սեմն ու Քամը, տեսնելով հորն այդ վիճակում, սկսեցին ծաղրելով բարձր քրքջալ: Կրտսեր որդին՝ **Հաբեթը**, եղբայրների՝ հորն անարգող անվայելուչ **պահվածքից** վրդովված, խիստ սաստեց նրանց և իսկույն ծածկեց հորն իր **թիկնոցով**: Արթնանալով Նոյը իսկապես ամաչեց իր **արարքից**:

Հաջորդ առավոտ նա՝ որպես երախտահատույց մահկանացու, բարձրացավ Մասիսի գագաթը և զոհեր մատուցեց Աստծուն: Առաջին օրը զոհաբերեց մի գառնուկ, երկրորդ օրը՝ մի **կապիկ**, երրորդ օրը՝ մի խոզ: Հաբեթի **հարցին**՝ ինչու է հայրը ընտրել հենց այդ կենդանիներին, Նոյը պատասխանեց.

- Գինու առաջին գավաթից մարդը դեռևս հեզ է գառան նման, երկրորդ բաժակից վերածվում է խեղկատակ հիշեցնող կապիկի, իսկ երրորդ բաժակը կերպարանափոխում է մարդուն այնպես՝ նույնիսկ մտերիմները չեն ճանաչում. նա խոզի պես բերանքսիվայր թավալվում է գետնին՝ արժանանալով շրջապատի արհամարհանքին:

2. պատսպարվել էին/էր,
բոլոր/ողջ,ամբողջ հանդերձանքը,
առանց հագուստ/հագուստի,
վրդոված-վրդովված,
խիստ կերպով- խիստ,
իրեն/ իր թիկնոցով,

3. այպանել- ծաղրել, ըմբոշխնել-վայելել, հտպիտ-խեղկատակ, կթղա-գավաթ,
քամահրանք-արհամարհանք, պարեգոտ-թիկնոց, անպաշաճ-անվայելուչ

4. <u>երախտ</u>+<u>ա</u>+<u>հատ</u>+<u>ույց</u>,
<u>ան</u>+<u>վայել</u>+<u>ուչ</u>,
<u>ան</u>+<u>աս</u>+<u>ուն</u>,
<u>առ</u> + <u>աջ</u> + <u>ին</u>

5.միջօրե- ստորոգելի,
Հաբեթը- բացահայտիչ,
պահվածքից- ներգործող խնդիր,
թիկնոցով-միջոցի խնդիր,
արարքից-պատճառի պարագա,
կապիկ- ուղիղ խնդիր,
հարցին- հանգման խնդիր,

## Գնահատման չափանիշներ- 10-րդ դասարան

Ամբողջ հարցաշարին տրվում է 50 միավոր, որից՝

1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 8միավոր
2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 6 միավոր
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 7 միավոր
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր

Եթե արմատները և ածանցները ընդգծված չեն, կամ դրանցից մեկը սխալ է ընդգծված, ապա միավոր չի տրվում:

5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 7 միավոր
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 3 միավոր
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր:

Եթե համանունը ճիշտ է ընտրված, սակայն բացատրությունը սխալ է, միավոր չի տրվում:

8. Ճիշտ պատասխանի համար 1 միավոր:

Եթե կաղապարով տրված անդամներից անգամ մեկը բացակայում է, միավոր չի տրվում:

9. Շարադրությանը տրվում է 10 միավոր: Ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1, կետադրականի համար՝ 0,5, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: